***Հաստատված է***
*Հայաստանի եվրոպական համալսարանի*
*գիտական խորհրդի*
*12 ապրիլի 2023թ.*
*թիվ 43 որոշմամբ*
*ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

***Approved by***
*the Scientific Council of*
*the European University of Armenia*
*April 12, 2023*
*Session N 43,*
*Rector: H. Bisharyan*

_________________________________
(ստորագրություն, Կ.Տ./Signature)

# ԿԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ, ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանի (այսուհետ՝ ՀԵՀ, Համալսարան) պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետև՝ Դասախոս) ակադեմիական խրախուսման, լրավճարների հաշվարկման և վճարման կարգը և պայմանները:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

1.3. Սույն կարգի դրույթները տարածվում են Համալսարանի հիմնական աշխատող հանդիսացող դասախոսների վրա:

1.4. Դասախոսի խրախուսանքի միջոցները կիրառվում և լրավճարները վճարվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

# ORDER ON EUA ACADEMIC INCENTIVE, ADDITIONAL PAYMENT CALCULATION AND PAYMENT

## 1. GENERAL PROVISIONS

1.1. This order defines the procedure and conditions for the academic promotion, calculation and payment of additional payments for the Academic Staff (hereinafter: Professor) of the European University of Armenia (hereinafter: EUA, University).

1.2. The legal bases of this regulation are RA Laws "On Education" and "On Higher and Postgraduate Professional Education", the RA Labor Code, the University Charter and other legal acts.

1.3. The provisions of this regulation refer to lecturers who are the main employees of the University.

1.4. Lecturer incentives are applied and allowances are paid by order of the Rector of the University.

## 2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Խրախուսումը Դասախոսի ակադեմիական հաջողությունների արժանի գնահատմանը և աշխատանքի արդյունավետությանն ուղղված նախաձեռնությունն է:

2.2. *Դասախոսի առաջխաղացման և խրախուսման սկզբունքներն են.*

ա) օրինակելի վարքը,

բ) աշխատանքի կատարողականը և բարձր որակը,

գ) հիմնական աշխատող լինելու հանգամանքը,

դ) գիտական աստիճանի առկայությունը,

ե) գիտահետազոտական և կրթամշակութային նախաձեռնությունները և հրապարակած աշխատանքները,

զ) մասնակցությունը գիտաժողովներին, գիտական սեմինարներին, և այլ գիտական միջոցառումներին,

է) մասնակցությունը դրամաշնորհային և հետազոտական ծրագրերին,

ը) օտար լեզվի իմացությունը և օտար լեզվով դասավանդման փորձը,

թ) բուհի հեղինակությունը և վարկը բարձրացնելուն ուղղված այլ գործոններ:

*2.3 Դասախոսի նկատմամբ կարող են կիրառվել նյութական և ոչ նյութական խրախուսանքի հետևյալ ձևերը.*

ա) շնորհակալության հայտարարում,

բ) միանվագ դրամական պարգևատրում,

գ) հուշանվերով պարգևատրում,

դ) պատվոգրի, շնորհակալագրի, մեդալի հանձնում,

ե) ակադեմիական կոչումների շնորհում,

զ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում:

է) կարգապահական տույժի հանում:

## 2. ACADEMIC INCENTIVE ORDER AND CONDITIONS

2.1. The incentive is the initiative aimed at the worthy evaluation of the lecturer's academic success and work efficiency.

2.2. *The principles of promotion and encouragement of the lecturer are:*

a) exemplary behavior,

b) performance and high quality of work,

c) the fact of being the main employee,

d) existence of a scientific degree,

e) scientific research and educational and cultural initiatives and published works,

f) participation in conferences, scientific seminars, and other scientific events,

g) participation in grant and research programs,

h) knowledge of a foreign language and experience of teaching in a foreign language,

i) other factors aimed at increasing the university's reputation.

2.3. *The following forms of material and non-material incentives can be applied to the lecturer:*

a) declaration of thanks,

b) one-time monetary reward,

c) reward with a souvenir,

d) handing over a certificate of honor, a certificate of appreciation, a medal,

e) awarding of academic titles,

f) provision of additional paid leave.

g) removal of disciplinary penalty.

## 3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1 Եվրոպական համալսարանում Դասախոսին վճարվում է լրավճար հետևյալ ակադեմիական նախաձեռնությունների և գիտական հրապարակումների համար մասնավորապես.

ա) «Scopus» շտեմարանում ընդգրկված գիտական պարբերականներում տպագրված հոդվածի համար ՝ 50.000 ՀՀ դրամ:

բ) «Web of Science» շտեմարանում ընդգրկված գիտական պարբերական-ներում տպագրված հոդվածի համար ՝50.000 ՀՀ դրամ:

գ) «Հայաստանի եվրոպական համալ-սարան» գիտական հոդվածների ժողո-վածու պարբերականում անվճար հիմունքներով հոդվածի տպագրում:

դ) Համալսարանի գիտական խորհրդի կողմից երաշխավորված, մենագրու-թյունների, ուսումնական և մեթոդական ձեռնարկների, բառարանների անվճար հրատարակություն (ծավալը առնվազն 5 տպագրական մամուլ) և որպես լրավճար՝ 20.000 ՀՀ դրամ:

ե) ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված բուհական դասագրքի հրատարակման համար՝ 50.000 ՀՀ դրամ:

զ) Դոկտորական ատենախոսության պաշտպանության համար՝ 50.000 ՀՀ դրամ:

է) Համալսարանի ուսանողական օլիմ-պիադաների կազմակերպման համար՝ յուրաքանչյուր առարկայի դեպքում՝ 40.000 ՀՀ դրամ:

ը) Համալսարանի *«լավագույն դասա-*

## 3. ADDITIONAL ACADEMIC PAYMENTS CALCULATION, PAYMENT ORDERS AND CONDITIONS

3.1. In the European University, the Lecturer is paid an additional payment for the following academic initiatives and scientific publications, in particular:

a) 50,000 AMD for an article published in scientific periodicals included in the "Scopus" database,

b) 50,000 AMD for an article published in scientific periodicals included in the "Web of Science" database.

c) Publication of an article free of charge in the periodical "European University of Armenia" collection of scientific articles.

d) Free publication of monographs, educational and methodological manuals, dictionaries (volume at least 5 printing presses) guaranteed by the Scientific Council of the university and 20,000 AMD as an additional payment.

e) 50,000 AMD for the publication of a university textbook guaranteed by the RA ESCS.

f) 50 000 AMD for the defense of a doctoral dissertation.

g) 40,000 AMD for the organization of the University's student Olympiads for each subject.

h) 50,000 AMD for the lecturer awarded the title of "The Best Lecturer" of the University.

*խոս»* կոչմանը արժանացած դասախոսին՝ 50.000 ՀՀ դրամ:

3.2 Համահեղինակությամբ հրատարակված գիտական աշխատանքների դեպքում լրավճարը բաժանվում է համահեղինակների միջև:

3.2. In the case of co-authored scientific works, the payment is divided between the co-authors.

3.3 «3.1» կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված լրավճարները վճարվում են բուհի այն դասախոսներին, ովքեր տպագրված հոդվածում որպես աշխատավայր նշել են Հայաստանի եվրոպական համալսարանը:

3.3. The additional payments specified in sub-provisions "a" and "b" of provision "3.1" are paid to the lecturers of the University who mentioned the European University of Armenia as their place of work in the published article.

3.4 Եթե հոդվածի հեղինակը միաժամանակ հիշատակել է մեկից ավել աշխատավայրի անուն, ապա նրան վճարվում է սահմանված լրավճարի կեսը:

3.4. If the author of the article mentioned the name of more than one place of work at the same time, he/she is paid half of the specified payment.

3.5 *«Լավագույն դասախոս»* կոչման հավակնորդի ընտրությունը կատարվում է համաձայն ՀԵՀ ատեստավորման կարգի:

3.5. The candidate for the title of *"The Best Lecturer"* is selected according to the certification procedure of the EUA.

3.6 Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարը ուսումնասիրում է գիտական հրապարակումների և դրանք հավաստող փաստաթղթերի առկայության փաստը, ստուգում դրանց իսկությունը և ներկայացնում Համալսարանի ռեկտորին՝ լրավճարի հրաման արձակելու համար:

3.6. The secretary of the Scientific Council of the University examines the fact of the availability of scientific publications and documents certifying them, verifies their authenticity and submits to the Rector of the University to issue an order for additional payment.